

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### *2018 թվականի առաջին եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ*

2018 թվականի առաջին եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 2872 թղթակցություն, առաքվել՝ 1913 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 448, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 366, մարդու իրավունքների պաշտպանից՝ 4, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 598, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 583, գաղտնի թղթակցություն՝ 20, քաղաքացիներից՝ 872 դիմում: ՀՀ նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 6, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 11, ՀՀ նախարարություններից՝ 6, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 1 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2018թ. առաջին եռամսյակում կատարվել է 269 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ նախագահի աշխատակազմ: